ՎԱՀԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կառավարում,
բակալավրիատ, 3-րդ կուրս

COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հիմնաբառեր. *կորոնավիրուսային համավարակ, սոցիալ-տնտեսական հետևանքներ, հակաճգնաժամային միջոցառումներ, տնտեսական անկում*

2020 թվականը Հայաստանի Հանրապետությունում «նշանավորվել» է որպես աննախադեպ անորոշությունների ու շոկերի ժամանակաշրջան: Տարին սկսվեց կորոնավիրուսային ճգնաժամով և ավարտվեց Արցախյան պատերազմով՝ հայ ժողովրդին պատճառելով զգալի նյութական և մարդկային կորուստներ: Ըստ այդմ, հոդվածում ուսումնասիրվել և ներկայացվել են կորոնավիրուսային համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքները, տնտեսական համակարգի տարբեր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություններն ու ռիսկերը: Այդ նպատակով ՀՀ ՎԿ-ի, ԿԲ-ի, ՊԵԿ-ի կողմից հրապարակված տվյալների հիման վրա կատարվել է ՀՆԱ-ի կազմում ներառվող ցուցանիշների, արտաքին առևտրի ու ներդրումների վերլուծություն, առաջարկվել են տնտեսական կայունության և տնտեսական աճի ապահովման ուղիներ:

Ներածություն: 2020 թ. մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց աշխարհում կորոնավիրուսի համավարակ[1]: Համաճարակաբանական առանձնահատկություններից անկախ՝ COVID-19 համավարակը լրջագույնս խաթարեց համաշխարհային տնտեսության արտադրական և առևտրային կապերը, գերազանցեց իր «գործընկերներին» տնտեսական վնասների պատճառման «հմտություններով»՝ որոշ ցուցանիշներով առաջ անցավ նույնիսկ 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի արձանագրած տվյալներից:

COVID-19 նախորդ ճգնաժամերից տարբերվում է զարգացման իր աննախադեպ արագությամբ: Եթե 2008 թ. ճգնաժամի դեպքում միջազգային ֆոնդային համաթվերի անկումը տևել է 17 ամիս, ապա COVID-19-ի պարագայում անկման նույն խորությունն արձանագրվել է 2 ամսվա ընթացքում[2]: Այսպիսով, կորոնավիրուսի ներթափանցման պահից սկսած, տարբեր երկրներում կառավարությունները համավարակի հետ կապված հետագա ռիսկերի և հետևանքների կանխարգելման ու չեզոքացման նպատակով ընտրել և կիրառել են տարաբնույթ հակաճգնաժամային միջոցառումներ, որոնց նպատակը տնտեսական ակտիվության խթանման միջոցով առաջանցիկ տնտեսական աճի ապահովումն էր:

Գրականության ակնարկ: Տնտեսության զարգացման տրամաբանական բաղկացուցիչ մաս են կազմում տարաբնույթ ճգնաժամերը, որոնք իրենց դրսևորումներով շեղում են տնտեսական գործընթացները: Առավել խոր ճգնաժամեր դիտվել են 1929-1933 թթ., 1973-1975 թթ. և 2008-2010 թթ.: Այդօրինակ իրավիճակներում մշակվում են ճգնաժամի թուլացմանը և բացասական հե-

---

[1] https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019

[2] Տե՛ս «Լույս» հիմնադրամ, Նոր կորոնավիրուսի հարուցած ճգնաժամի հաղթահարման միջոցառումները աշխարհում և Հայաստանում, համեմատական վերլուծություն, էջ 36:

տևանքների վերացմանն ուղղված համակարգված գործողություններ: 1929-1933 թթ. Մեծ տնտեսական ճգնաժամը գործնականում հիմնավորեց խորքային ճգնաժամերի հաղթահարման դեպքում պետական գործուն միջամտության անհրաժեշտությունը, ինչը հակասում էր դասականների այն պնդմանը, թե «շուկայի անտեսանելի ձեռքը[1]», առանց պետության միջամտության, կապահովի արտադրության ներուժային ծավալի և գործազրկության բնական մակարդակի զուգակցում: Ջ. Մ. Քեյնսն[2] առաջինն ընդգծեց, որ տնտեսության մեջ պետության գործուն միջամտությունը կարող է դրական դեր խաղալ ամենից առաջ ճգնաժամային իրավիճակներում: Սակայն, մինչ օրս պետական ակտիվ քաղաքականության կողմնակիցների և հակառակորդների միջև շարունակվում է տնտեսական ճգնաժամերի դեմ պայքարում պետության դերակատարության և միջամտության աստիճանի մասին բանավեճը:

Կորոնավիրուսային համավարակի կանխարգելման և սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացման համար երկրների կառավարությունները պետական միջամտության ծավալները բավականաչափ մեծացրին՝ թե՛ հասարակական ակտիվության, թե՛ տնտեսական գործունեության նկատմամբ կիրառելով աննախադեպ սահմանափակումներ:

Համավարակի սրացման օրերին հայկական տնտեսագիտական համայնքը, ի դեմս Վ. Գաբրիելյանի, Վ. Արամյանի, Վ. Ավանեսյանի, Հ. Բագրատյանի և այլոց, համակողմանի վերլուծություններով անդրադարձել է COVID-19 ճգնաժամին: Նախկին փոխվարչապետ Վ. Գաբրիելյանի դիտարկմամբ՝ այդ ճգնաժամը, ի տարբերություն նախորդների, համակարգային է, այսինքն՝ «հարվածում է» տնտեսության բազմաթիվ ճյուղերի[3]: Հետևաբար, տրամաբանական էին բացասական զարգացումներն ինչպես համաշխարհային, այնպես էլ ՀՀ տնտեսության համար: Ավելին, տնտեսությունների վերականգնումը տեղի է ունենում դանդաղ տեմպերով, քանի որ ցածր տնտեսական ակտիվությունը փոփոխում է միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացումների տրամաբանությունը: Ֆինանսների նախկին նախարար Վ. Արամյանի դիտարկմամբ՝ ճգնաժամերի հետևանքով տնտեսությունում, որպես կանոն, գոյանում է իրացվելիության դեֆիցիտ, որը կարող է վտանգել տնտեսավարող սուբյեկտների վճարունակությունը և հանգեցնել գործազրկության մակարդակի ավելացման[4]: Էկոնոմիկայի նախկին նախարար Վ. Ավանեսյանը նկատում է՝ COVID-19-ի ժամանակ առավել կարևոր նշանակություն ունեն պետական աջակցության ծավալները և արագությունը[5]:

Հետազոտության մեթոդաբանություն: Վերլուծությունն իրականացվել ՀՀ ՎԿ և ԿԲ հրապարակած տվյալների հիման վրա: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության և համեմատության մեթոդներ: Վերլուծությունն իրականացվել է՝ անդրադարձ կատարելով ՀՆԱ-ի կառուցվածքին և ՀՆԱ-ում ներառված ցուցանիշների շարժընթացին՝ պարզելու համավարակի ազդեցության իրական չափը և իրականացված միջոցառումների արդյունավետությունը:

---

[1] Տե՛ս **Ա. Սմիթ**, Ազգերի հարստություն:

[2] Տե՛ս **Ջ. Մ. Քեյնս**, Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն:

[3] Տե՛ս **Վ. Գաբրիելյան**, հարցազրույց «Երկիր մեդիա» հեռուստաընկերությանը, 08.04.2020 թ., https://bit.ly/3aTO0bG

[4] Տե՛ս **Վ. Արամյան**, հարցազրույց ArmDaily լրատվականին, 17.04.2020, https://www.youtube.com/watch?v=QWf6srayMTY

[5] Տե՛ս **Վ. Ավանեսյան,** հարցազրույց CIVILNET լրատվականին, 15.04.2020, https://www.youtube.com/watch?v=k40I54tno0s

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 2020 թ. ապրիլ ամսին կատարված ուսումնասիրությունների՝ հիմք ընդունելով տնտեսության զարգացման V-աձև սցենարը՝ ամբողջ աշխարհում նույն թվականին կանխատեսվում էր 3% անկում, իսկ 2021-ին՝ 5,8% միջինացված աճ: 2020 թ. զարգացած երկրների համար կանխատեսվում էր 6,1% անկում, 2021 թ.՝ 4,5% աճ, 2020 թ. անցումային կամ զարգացող երկրների համար՝ 1% անկում, 2021 թ.՝ 6,6% տնտեսական աճ[1]:

Սակայն, կորոնավիրուսի համավարակի դեմ առողջապահական ոչ արդյունավետ պայքարի և դրանից ածանցված սոցիալ-տնտեսական ցուցանիշների վատթարացումը V-աձև սցենարը վերափոխեց U-աձևի:



Գծապատկեր 1. ***ՀՀ տնտեսական աճի շարժընթացը***[2]

Հաջորդիվ ուսումնասիրվել են ՀՀ-ում կորոնավիրուսային համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքները, տնտեսական համակարգի վրա հնարավոր ազդեցություններն ու ռիսկերը:

Ինչպես երևում է գծապատկերից, 2019 թ. ՀՀ-ն ապահովել է 7,6% տնտեսական աճ՝ գրանցելով ամենաբարձր աճը նախորդ տասներկու տարիների ընթացքում: Սակայն, պետք է նշել, որ այդ ամենով հանդերձ, 2020 թ. տնտեսական բյուջեի կառուցվածքում նախատեսվում էր 4,9% տնտեսական աճ: Սա վկայում է այն մասին, որ 2019-ի տնտեսական աճը պայմանավորված է եղել որոշակի էֆեկտներով, մասնավորապես՝ ստվերի կրճատմամբ, նոր սերնդի ՀԴՄ-ների տեղադրմամբ և առանցքային նշանակություն ունեցող 189000 ավտոմեքենաների ներկրմամբ՝ վերաարտահանման նպատակով: Համապատասխանաբար՝ 2019 թ. արտահանման և ներմուծման ծավալներն արձանագրել էին 9.4 և 10.8% աճ: Երկնիշ տնտեսական աճ էր ապահովել ծառայությունների ոլորտը՝ առավելապես պայմանավորված խաղատնային գործունեությամբ:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ 2019 թ. նախադրյալներ չէին ստեղծվել երկարաժամկետ զարգացման համար, և 7,6% տնտեսական աճը չի կարելի համարել ներառական: Իսկ 2020 թ. կորոնավիրուսային համավարակը և պատերազմը էլ ավելի խարխլեցին ՀՀ տնտեսության հիմքերը՝ արձանագրելով մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների բավականին մեծ անկում:

ՀՀ Կառավարությունը 2020 թ. մարտի 26-ի N 354-Լ որոշմամբ հաստատել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների հակազդման միջոցառում-

---

[1] Տե՛ս World Economic Outlook, April 2020, The Great Lockdown, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2020/04/14/weo-april-2020

[2] Կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

ների համապարփակ ծրագիրը՝ 150 մլրդ ՀՀ դրամ նախատեսելով սոցիալ-տնտեսական աջակցության փաթեթի իրականացման համար[1]:

Հարկ է նշել, որ ՀՀ Կառավարության հակաճգնաժամային փաթեթի հիմնական առանձնահատկությունը հարկային արձակուրդների բացակայությունն է, իսկ իրականացված սոցիալական բնույթի միջոցառումները պետք է ներառել «անհապաղ ֆիսկալ աջակցության» խմբում, քանի որ դրանք ենթադրում են այնպիսի անհատույց պետական ծախսեր, որոնք, որպես կանոն, չեն ազդում տնտեսության՝ եկամուտներ և հարկեր գեներացնելու կարողության վրա:

Տնտեսական միջոցառումներն իրագործվել են առավելապես վարկային խողովակով և ներառվում են *երաշխիքներ և իրացվելիության ներարկման այլ գործիքներ* խմբում, քանի որ դրանք ենթադրում են կառավարության և մասնավոր առևտրային բանկերի համագործակցություն: Այդ համագործակցությունը կարող է դրսևորվել վարկերի համաֆինանսավորման, սուբսիդավորման կամ երաշխավորման (վարկերի համար երաշխիքի տրամադրման) տեսքով: Այս հանգամանքն առաջ է բերում մի շարք խնդիրներ: Մասնավորապես, ՀՀ տնային տնտեսությունների և ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բավականին խնդրահարույց է: Դրանք գերծանրաբեռնված են պարտքային պարտավորություններով, հատկապես՝ բանկային վարկերով: Հետևաբար, իրականացված միջոցառումների արդյունքում շղթայաբար ավելացել են բանկային համակարգի չաշխատող վարկերը: Հաշվի առնելով այս դիտարկումը՝ անհրաժեշտ էր նկատի ունենալ նաև բանկային համակարգի վարկային պորտֆելի ռիսկայնությունը, այն է՝ չաշխատող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում, որը 2020-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ արդեն իսկ կազմել էր 7.1%: Ընդ որում, այս պարագայում շատ կարևոր է հիշել նաև պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքների մասին:



	ՀՆԱ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Ծառայություններ
2019	107.6	109.0	94.2	106.5	108.9	115.0
2020	92.6	98.5	95.9	93.3	86.8	91.3

Գծապատկեր 2. *ՀՆԱ կառուցվածքային վերլուծություն*[2]

Ինչպես երևում է գծապատկերից, 2020 թ. կորոնավիրուսի հարուցած ճգնաժամը ՀՀ տնտեսությունում ձևավորել է խորքային բացասական դրսևորումներ: Արդյունքում, 2020 թվականին արձանագրվել է 7,4% տնտեսական անկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7.6% աճի դիմաց: Հետագա շարադրանքում անդրադարձ է կատարվում առանձին ոլորտների և ենթաճյուղերի արձանագրած աճի միտումների շարժընթացին:

[1] Տե՛ս ՀՀ Կառավարության որոշում № 354-Լ, 2020 թ. մարտի 26, https://www.gov.am/am/

[2] Կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

Նախևառաջ նշենք, որ վերջին տարիներին զբոսաշրջությունը Հայաստանում բավականին արագ տեմպերով զարգացող ոլորտներից է, իսկ կորոնավիրուսով պայմանավորված վնասները զբոսաշրջության ոլորտում կրում են համաշխարհային բնույթ, և Հայաստանը չէր կարող զերծ մնալ այդ ամենից: ՀՀ-ում ճգնաժամային իրավիճակը զբոսաշրջության ոլորտում ազդել է հյուրանոցային տնտեսության, հանրային սննդի օբյեկտների, ժամանցի կենտրոնների գործունեության և բազմարկչի էֆեկտով՝ տնտեսության այլ ոլորտների վրա: Զբոսաշրջության ոլորտում իրականացված հակաճգնաժամային միջոցառումները եղել են ուշացած, ինչի հետևանքով այդ ոլորտում գործող փոքր և միջին կազմակերպությունները կա՛մ սնանկացել են, կա՛մ կրում են ֆինանսական դժվարություններ:

Ամենամեծ անկումը գրանցվել է *կացության և հանրային սննդի կազմակերպման* և *փոխադրումների և պահեստային տնտեսության* ոլորտներում, համապատասխանաբար՝ 43,3 և 34,4%: Ընդ որում, 2019-ին հիշյալ ոլորտներում համապատասխանաբար արձանագրվել էր 20,1 և 10,0% աճ:

Այս ամենով հանդերձ, տնտեսության որոշ ոլորտներ, ինչպես օրինակ՝ *տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների* ոլորտը, կորուստներ չեն արձանագրել, դեռ ավելին՝ ապահովել են 8,4% աճ: Հետևաբար, անհրաժեշտ է կանխել պետական ռեսուրսների հնարավոր հոսքն այդ ուղղություններով: Փոխարենը պետք է օժանդակել, օրինակ, *հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի* ոլորտում գործող կազմակերպություններին, որոնք կրել են էական վնասներ:

Արդյունաբերության ոլորտում *հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման* ենթաճյուղն ապահովել է 8,4% աճ՝ 2019-ի 37,1%-ի դիմաց: Մտահոգիչ է այն փաստը, որ մշակող արդյունաբերության ենթաճյուղը կրճատվել է 3.6%-ով: Բացասական միտումներ են գրանցվել նաև *էներգետիկայի և ջրամատակարարման* ենթաճյուղերում, որոնք կրճատվել են համապատասխանաբար՝ 1,1 և 25.8%-ով:

Գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է 4,1% անկում, սակայն նման անկումներ գրացվում են 2016-ից ի վեր: Ընդ որում, ՀՀ-ում սահմանամերձ նոր տարածքների ի հայտ գալով, կրճատվել են նաև հացահատիկի և հատիկաընդեղենի ցանքատարածությունները, ինչը, բնականաբար, բացասական ազդեցություն է ունենալու նաև պարենային անվտանգության վրա:

Շինարարության ոլորտում արձանագրվել է 6,7% անկում: Անհրաժեշտ է նշել, որ պետական շինարարության նվազումը կապված է կառավարության կողմից կապիտալ ծախսերի թերակատարման հետ, ինչի հետևանքով երկարաժամկետում տուժում է տնտեսական աճը:

Անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտում արձանագրվել է 14,5% անկում, ինչն առավելապես արձագանքն է անշարժ գույքի երկրորդային շուկայի, քանի որ նվազել է պահանջարկը երկրորդային շուկայում: Առաջնային շուկայում գների հարաբերական կայունությունը պայմանավորված է նորակառույցների նկատմամբ մեծ պահանջարկով, քանի որ գործում է եկամտահարկի վերադարձման ծրագիրը:

Մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում արձանագրվել է 13.4% անկում:

Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ COVID-19 համավարակը նաև հնարավորություն է ընձեռել՝ բարելավելու առողջապահական համակարգի վի-

ճակը: Ըստ այդմ, առողջապահության ոլորտում արձանագրվել է 6,9% աճ: ՀՀ-ի համար ընդօրինակելի է ՌԴ Կառավարության այն նախաձեռնությունը, որով պաշտպանության նախարարությանը հատկացվել են միջոցներ՝ զինվորական անձնակազմի համար 16 նոր ինֆեկցիոն հիվանդանոցներ կառուցելու նպատակով:

2020 թ. գնաճը կազմել է 1.2%, ընդ որում, վերջինս գտնվում է ԿԲ սահմանած թիրախային միջակայքից դուրս՝ ստորին ուղղությամբ, ինչը գերազանցապես պայմանավորված է համավարակով, որը հանգեցրել է թույլ պահանջարկի: Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2021 թ. հոկտեմբերը՝ 2020 թ. հոկտեմբերի նկատմամբ) կազմել է 9.1%:

Վերոնշյալ ցուցանիշների մեծ մասը 2020 թ. համապատկերում գրանցում է բավականին արագ աճի տեմպեր, սակայն պետք է ասել, որ դեռևս չկան ներառական տնտեսական աճի ապահովման էական նախադրյալներ:



Գծապատկեր 3. ***ՕՈՒՆ շարժընթացը (մլն ԱՄՆ դոլար)***[1]

Պետք է նշել, որ COVID-19 և Արցախյան երկրորդ պատերազմը էականորեն ազդել են և՛ տեղական, և՛ օտարերկրյա ներդրումների վրա: Թեև ՀՀ Կառավարությունը որոշակի միջոցառումներ է ձեռնարկել բացասական հետևանքները մեղմելու համար, սակայն դրանց ազդեցությունը բավականին սահմանափակ է եղել: Այսպես, 2021 թ. առաջին կիսամյակում Հայաստանի տնտեսության իրական հատվածում օտարերկրյա համախառն ներդրումների հոսքերը կազմել են շուրջ 1 մլրդ 219 մլն ԱՄՆ դոլար, որից 353 միլիոնը օտարերկրյա ուղղակի ներդրումներն են: 2020 թ. առաջին կիսամյակի համեմատ ներդրումների ընդհանուր ներհոսքն աճել է 28%-ով, իսկ ՕՈՒՆ-ը՝ 43%-ով: Սակայն, դեռևս չեն վերականգնվել 2019 թ. առաջին կիսամյակի ցուցանիշները, երբ իրական հատվածում օտարերկրյա համախառն ներդրումների հոսքերը կազմել են շուրջ 1 մլրդ 456 մլն ԱՄՆ դոլար, որից 353 միլիոնը օտարերկրյա ուղղակի ներդրումներն են:

Արտաքին առևտրաշրջանառությունը 2020 թ. բացարձակ մեծությամբ կազմել է 7120.3 մլն ԱՄՆ դոլար՝ 2019 թ. ցուցանիշին զիջելով 13 տոկոսային կետով (8186.2 մլն ԱՄՆ դոլար): Ապրանքների արտահանումը 2021 թ. հունվար-հունիսին կազմել է 1433.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 18.0%-ով, իսկ ներմուծումն աճել է 7.8%-ով՝ կազմելով 1948.6 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում, ապրանքների գծով բացասական մնացորդը նվազել է 76.9 մլն ԱՄՆ դոլարով[2]:

[1] Կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:
[2] Տե՛ս ՀՀ ԿԲ, ՀՀ վճարային հաշվեկշիռը 2021 թ. հունվար-հունիսին:



Գծապատկեր 4. ***Պետական պարտքի շարժընթացը (մլն ԱՄՆ դոլար)***[1]

Հայաստանը COVID-19 համավարակը դիմավորել է բավական բարձր պետական պարտքի բեռով: 2019 թ. վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական պարտքն առաջին անգամ հատել է 7 միլիարդ ԱՄՆ դոլարի շեմը՝ կազմելով շուրջ 7.3 միլիարդ: 2020 թ. տնտեսական անկման հետևանքով նվազել էին բյուջեի հարկային եկամուտները, ֆինանսավորման կարիք առաջացել էր ոչ միայն հակաճգնաժամային միջոցառումների, այլ նաև բյուջեով նախատեսված ծախսերի իրականացման համար: Նոր միջոցառումների մշակմանը և դրանց ֆինանսավորմանն անհրաժեշտ էր լրացուցիչ ռեսուրսների ներգրավում: Արդյունքում, 2020 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7.96 միլիարդ: Ընդ որում, խախտվել է հարկաբյուջետային «ոսկե կանոնը[2]»՝ կառավարությունը հատել է ՀՆԱ-ի 60%-ի շեմը, ինչը պարտքի կառավարման կայունության տեսանկյունից մեծ ռիսկեր է պարունակում:

Եզրակացություն: Կորոնավիրուսային համավարակի հաղթահարման նպատակով իրականացված տնտեսական և սոցիալական օժանդակության ծավալները համահունչ չեն եղել ՀՀ-ում առկա իրավիճակին: Ավելին, իրավիճակին համարժեք չէր նաև իրականացված ծրագրերի ընդհանուր բյուջեն՝ 150 մլրդ ՀՀ դրամը:

Համախառն ներքին արդյունքի համեմատաբար մեծ ցուցանիշներ ապահովող գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, առևտրի, շինարարության ոլորտները կրել են էական վնասներ, իսկ ճյուղերի ներսում բարելավման կամ բազմազանեցման ուղղությամբ որևէ գործողություն նախատեսված չէ:

Խաթարվել է ներդրումային միջավայրը, որն առանց այդ էլ լրջագույն և համակարգված կարգավորման կարիք ուներ: Իսկ արտաքին առևտուրն ի ցույց է դնում հայաստանյան տնտեսության բոլոր բացերը՝ հանքահումքային հատվածից և զբոսաշրջությունից կախվածությունը, բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման ոչ բավարար մակարդակը:

---

[1] Կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:
[2] file:///C:/Users/PC/Downloads/cr17330armenian.pdf

Տնտեսության վերականգնումն առ այսօր պահանջում է կանխատեսվածից ավելի երկար ժամանակ՝ հասարակությանը ստիպելով վճարել ավելի բարձր «սոցիալական գին»:

Տնտեսական կայունության և տնտեսական աճի ապահովման նպատակով առաջարկում ենք.

- մշակել վիճակագրական տվյալների բազայի ձևավորման մեթոդաբանական արդի մոտեցումներ, որոնց պարագայում կտրվի տնտեսության վիճակի հնարավորինս ճշգրիտ գնահատական, որից էլ կբխեն տնտեսության կառուցվածքի հետագա բարելավման ուղղությունները,
- իրականացնել ներդրումների ներգրավմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներ՝ երկրի ներդրումային գրավչությունը բարձրացնելու նպատակով,
- պարենային անվտանգության ապահովման նպատակով իրականացնել պետական միջամտություն՝ մասնավորեցված, սակայն չօգտագործվող հողերի մասով,
- վերանայել կառավարության ծախսային քաղաքականությունը՝ մեծացնելով ինչպես փոխառու, այնպես էլ սեփական ռեսուրսների հաշվին իրականացվող ծախսերի արդյունավետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչիկյան Ս., Քթոյան Ա., Խմբագիր՝ Մ. Մովսիսյան, Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա // Հետազոտական աշխատանք, Եր., 2021:
2. «Լույս» հիմնադրամ, 2020 թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ *աշխատանքը*:
3. Թովմասյան Գ., Կորոնավիրուսը և միջազգային զբոսաշրջության վնասները, հետազոտական աշխատանք:
4. «Լույս» հիմնադրամ, Նոր կորոնավիրուսի (COVID-19) հարուցած ճգնաժամի հաղթահարման միջոցառումները աշխարհում և Հայաստանում. համեմատական վերլուծություն»:
5. «Լույս» հիմնադրամ, 2020 թ. շոկերի ազդեցությունները ՀՀ Կառավարության պարտքի վրա:
6. Ալեքյան Ս., Կովիդ-19-ի կանխարգելման միջոցառումների արդյունավետության, աշխատավայրում աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության միջոցների ապահովման կապակցությամբ աշխատանքի ոլորտում վարչարարության վերաբերյալ:
7. ՀՀ ՎԿ, ՀՀ արտաքին առևտուրը 2016-2020 թթ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության անվանացանկի 10-նիշ դասակարգման):
8. Ավետիսյան Հ., Հայաստանի պետական պարտքը շարունակում է աճել. ինչ միտումներ են նկատվում:
9. https://www.armstat.am/am/?nid=12
10. https://www.gov.am/files/docs/3133.pdf
11. https://www.cba.am/am/SitePages/Default.aspx
12. https://armeniasputnik.am/20211104/-34996837

ВАГЕ МАРТИРОСЯН
Менеджмент, бакалавриат, 3-й курс

ВЛИЯНИЕ COVID-19 НА ЭКОНОМИКУ АРМЕНИИ

Ключевые слова: *пандемия коронавируса, социально-экономические последствия, антикризисные меры, экономический спад*

2020 год ознаменовался для Республики Армении периодом беспрецедентной неопределенности и потрясений. Изменилась логика экономического развития, и это оказалось серьезным вызовом в деятельности как частного сектора, так и государственных учреждений. Год начался с коронавирусного кризиса, а закончился Арцахской войной, причинив армянскому народу значительные материальные и человеческие потери. В статье были изучены и представлены социально-экономические последствия пандемии коронавируса, возможные последствия и риски для различных компонентов экономической системы.

С этой целью на основе данных, опубликованных ВК, ЦБ, КГД РА, был проведен анализ показателей, включаемых в состав ВВП, внешней торговли и инвестиций, а также предложены пути обеспечения экономической стабильности и экономического роста.

VAHE MARTIROSYAN
Management, Bachelor's Degree, 3rd Year

THE IMPACT OF COVID-19 PANDEMIC ON THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *coronavirus pandemic, social-economic consequences, anti-crisis measures, economic decline*

2020 was a period of unprecedented uncertainties and shocks for Armenia. As a result, the logic of economic development changed, and both the private sector and state institutions faced serious challenges. The outbreak of the Covid-19 pandemic was at the beginning of the year and the Artsakh forty-four-day war at the end of the year caused palpable human and material losses for the Armenians. As a result of these shocks, a number of macroeconomic indicators declined and the foundations of the economy of Armenia, in terms of long-term development, were shaken in 2020. The paper analyzes soial-economic consequences of the pandemic and the possible risks for different componments of the economic system. The analysius of indicators included in GDP, international trade and investments is conducted and the several ways of ensuring economic stability and growth are presented.